

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

PAGE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻԱՆ Զ. ՆԵՐՍԷՍ - ՄԵՍՐՈՊ
Մաշտոց առաքելալ Հայաստանի . . . 181

ARTICLE DE FOND
DER NERSESSIAN P. N. — Mesrop Machtotz
apôtre de l'Arménie . . . 181

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՅՈՒՆԻ Զ. ՎԱՐԴԱՆ - Պատմութիւն Հայոց
Աղօթամատոյցին (Շարք) . . . 188

LITURGIE
HATSOUNI P. VARDAN — Histoire du Bré-
viaire Arménien (Suite) . . . 188

ՊԱՏՄԱԿԱՆ
ՏԷՐ-ՄՈՎՍԵՍԻԱՆ Զ. ՍԱՀԱԿ - Քննական
պատմութիւն Բագրատունեաց թագաւո-
րութեան անկումէն մինչեւ մեր օրերը
(Շարք) . . . 192
ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՄԻՔԱՅԷԼ - Հայաստանի
բերդերը (Շարք) . . . 200

HISTOIRE
DER-MOVSESSIAN P. S. — Histoire critique
depuis la décadence de la dynastie des
Bagratides jusqu'à nos jours (Suite) . . 192
HOVHANNESIAN P. MICHEL — Les forte-
resses de l'Arménie (Suite) . . . 200

ԿՐՕՆԱԿԱՆ
ԿԱՐՐԻՏՈՅ ԽՈՒԼԻՈՅ - Աւետարանի պապի-
րոսներ վերին եգիպտոսի զգտական բար-
բառով (Թրգմ. Տ. Գ.) . . . 203

BIBLIQUE
GARRIDO JULIO — Les papyrus de l'Evan-
gile en langue copte de haute Egypte (trad.
par T. G.) . . . 203

ԳՐԱԿԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՎԱՀԱՆ - Մի՛ տանջե՛ր
բու սիրտդ . . . 202
ԲԱԳՐԱՏ - ՄԵՍՐՈՊ Մաշտոցին . . . 202
ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ - Սփոփանք . . . 209

LITTERATURE
HOVHANNESIAN P. VAHAN — Ne tour-
mentez pas votre cœur . . . 202
BAGARAT — A Mesrop Machtotz . . . 208
ARSENE YERGATH — Consolation . . . 209

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՎԱՀԱՆ - «Գաղթաշ-
խարհի երգեր» Մատի Աթմաճեանի . . 210
ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՄԻՔԱՅԷԼ - «Աշխար-
հացոյց» Վարդանայ Վարդապետի, հրո-
շայի Պէրպէրեանի . . . 211

RECENSIONS
HOVHANNESIAN P. VAHAN — «Chansons
de diaspora» de Marie Athmadjian . . 210
HOVHANNESIAN P. MICHEL — «Géogra-
phie» de Vardan, publiée par Mr. Hayg
Berbérian . . . 211

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ
Տ. Ն. Զ. Ն. - Վաստակաւոր Յորեղեարժ
Մեծ. Զ. Յակոբոս Վրդ. Բոսպոլյեքեան . 206
ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՎԱՀԱՆ - Ի՞նչպէս տե-
սայ Հայաստանը (Շարք) . . . 213

ECHO ARMENIEN
P. N. D. N. — Le jubilé sacerdotale du R.
P. J. Posbeyekian . . . 206
HOVHANNESIAN P. VAHAN — Comment
j'ai vu l'Arménie . . . 213

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

Իտալիոյ համար . . .	3500 Լիր
Արտասահմանի համար . . .	8 Դոլար
Սէկ թիւր՝ 250 Լիր . . .	0,50 Դոլար

Pour l'Italie . . .	3500 Lires
Pour l'Etranger . . .	8 Dollars
Le Numéro: 250 Lires . . .	0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia



1843 - 1961
ՀԺԹ. ՏԱՐԻ

ԹԻԻ 9 - 10

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXIX^o année, 1961, N. 9 - 10 Septembre - Octobre

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

ԱՌԱՔԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

«Բագրատ աշխատութեանց համբերեալ՝
վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան
գտանելոյ»:

(ԿՈՐԻԻՆ, Վարդ Մաշտոցի)

Պատմութիւնը խորհրդաւոր վեհութեան
մէջ քողարկած է Մեսրոպ Մաշտոցի ան-
մահ դէմքը, ծածկելով մեզմէ անթիւ
մանրամասնութիւններ կեանքէն ու դոր-
ծէն՝ Հայաստանի այս մեծ առաքելին:
Մասիսի նման անհաս դադաթ ինքն ալ,
կարծէք՝ կը տենչայ մնալ ամպածրար
բարձունքի մէջ, աւելի մօտ երկնքի՝ քան
երկրի, Եթերին մէջէն հսկելու համար իր
սիրելի Հայաստանին վրայ, որուն տը-
լաւ անմահութեան դրոշմը՝ ոսկեղէն տա-
ռերու սուրբ կնուքով, ու բացաւ մեր
հնադարեան պատմութեան նոր ու փառա-
ւոր էջը՝ յաւերժութեան կնիքով միւռո-
նարոյր. հսկելու համար մանաւանդ՝ աշ-
խարհի չորս կողմը սփռուած իր սիրելի
դաւաններուն վրայ, որպէսզի զարեւոյ
անշէջ մնայ հայ մշակոյթի բազմաթիւ հու-
րը նուիրական:

Իսկ մենք, ինչպէս աւելի կը սիրենք
յափշտակուիլ հեռուէն Մասիսի վեհ դե-
ղեցկութեամբ, քան կոխոտել անոր կոյս

ապառաժները կամ ձիւնափայլ անարատ
պատմութեանը, այդպէս երկիւղած զգա-
ցումով մը համակուած՝ կը սքանչանանք
միայն այն խորհուրդին դիմաց, որ կը
կոչուի Մեսրոպ Մաշտոց: Կը սարսալ
մեր սիրտը, նաեւ մեր ձեռքը, երբ կը
համարձակինք գոնէ աղօտ՝ բայց հարա-
դատ պատկերը դծել, թերաստուեր մը,
այն հսկայ իրականութեան՝ որ կը կոչ-
ուի Մեսրոպ Մաշտոց:

Բայց եւ այնպէս չենք կրնար լռել.
չենք կրնար լռել, երբ մանաւանդ մերօր-
եայ օրաթերթերու սրնակներու վրայէն
քննադատներ կ'ասպատակեն պատմու-
թեան ու բանասիրութեան ասպարէզները,
հեղինակ ուղեւոր դառնալ՝ իրենք ալ ի-
րենց կարգին՝ նոր պատմութեան մը, վե-
րակառուցանողի ինքնալստահ ինքնագի-
տակցութեամբ: Չենք կրնար լռել, երբ կը
նշմարենք որ Մեսրոպ Մաշտոցի հարա-
դատ դիմագիծը կը նսեմացնեն, խրելով
անկէ հիմնական ու կարեւոր տարրեր, ու

կը ներկայացնեն մեզի Հայցելի հարազատ զաւակը՝ լոկ իբր հայրենասէր մտաւորական մը, կամ հնարամիտ զեւանդէտ մը, հանելով մինչեւ անգամ անոր վրայէն ճշմարտի խարաղը, «անապատականի շապիկը»։ Այդ քննադատներէն ոմանք տաղնապաճ, ջղայնանալու աստիճան բորբոքած, ձեռք առնելով Կորիւնի դրութիւնը՝ կը կարծեն ոչինչ գտնել այնտեղ մեծ Հայցելացիի վարքէն, կամ ամէն ինչ այլափոխուած, աստուածացած։ «Կորիւն պատմել չի գիտեր» պողալով, կամ Աղաթանգեղոսի պատմութիւնը յիմարական բանադուլանք հռչակելով՝ կը համարին փեղկերը բանալ ցարդ փակ մնացած պատմութեան մը, եւ Մեսրոպ Մաշտոցի նոր արձանը կանգնել։ Սկիւտիկ ակնոցով, քմծիծաղով ու 1800եան բանապաշտի զառամած մտայնութեամբ կը նային ճշմարտեաց Մեսրոպին, զինուորականի տարազը միայն յարմար նկատելով անոր նկարագրին. անհաւատալի կը գտնեն այն յանկարծական փոփոխութիւնը՝ որով Մեսրոպ կը թողու արքունիքը եւ կը փութայ ճշմարտ, պալատէն կ'անցնի անապատ։ Եւ ասիկա կը վերադրեն երեւակայոտ ու հիւանդ կենսագիրներու կրօնամիտ զգացումներուն. նոյնիսկ կը համարին՝ հիմնովին շինելու համար իրենց նոր պատմութիւնը՝ որ մեր ձեռքն հասած Կորիւնի «Վարք Մաշտոցի»ն, լոկ քառասուն էջ՝ կիսով ներբողական, ըլլայ բանաքաղ խառնակոյտ մը՝ մինչեւ իսկ տասներորդ դարուն ապրող Մաշտոց Եղիվարդեցիի ճշմաստուն վարքին հետեւողութեամբ վերամշակուած. անշուշտ ոսկեգարեան զրաբարով։ Բացէ ի բաց կը հերքեն Մեսրոպ Մաշտոցի տիտանային ճիգերուն մէջ՝ ի սէր այրուբենին՝ գերբնական շարժառիթներ, այսինքն՝ քրիստոնէութեան ծաւալումին յարմար դործիք մը յորինելու նպատակը։

Ո՛չ միայն այսքան, այլ նաեւ մեծամիտ ինքնապատահութեամբ կ'ելլեն չափելու պահանջողական խմբակներու «գլխու պնդութիւնը», իրենց իսկ գերագնիւ (!?) բառերով... առանց խորհելու որ ընդ-

դիմադիր խմբակը կարեկցութեան աչքով պիտի նայի իրենց լոյծ խորհրդածութիւններուն։

Բայց, Պարոն Նարդուհի, պատմութիւն չենք կրնար շինել Կորիւն մը նախատելով, Խորենացիին «զարգարող» բնորոշելով, եւ անձնական տեսակէտներու հիմերը կարծելով գտնել Փաւստոսի մէկ վկայութեան մը մէջ, որ խախտու է արմատապէս։ Պատմութիւն չենք կրնար շինել մանաւանդ Մեսրոպ Մաշտոցի խորհուրդին մէջէն ջնջելով կրօնական հետքերը. այդպէս կ'եղծանենք միայն անոր հարազատ դիմադիւծը, որ մեզի համար կը մնայ միշտ լուսաւոր. եւ որ, դարերու մէջէն, երեսունեակեց զերբու ճաճանչներով շողշողուն, կ'երկարէ մեզի միշտ իր անդրանիկ պատգամը, «ձանաչել զիմաստութիւն»։

Ճիշտ է որ քիչ բան կ'աւանդեն մեզի մեր հին պատմագիրները այս հրաշալի մարդուն մասին. չեն տար այժմեան մեր արդար հետաքրքրութիւնը դոհացնող ըստոյգ տարրեր, թուականներ, տուեալներ. բանասիրական ու պատմական բազմաթիւ հարցեր տակաւին մշտնջի մէջ կը յաճին. մինչեւ իսկ ամենակարեւոր խնդրին շուրջ՝ թէ որո՞նք են Մեսրոպի հնարած բուն տառերը՝ չկայ համաձայնութիւն։

Բայց այժմեան քննադատին կը մնայ քովէ քով բերել այդ կարեւոր հատուկությունները, մեզի համար գոհար ու մոգայիւք, միացնել, ամբողջացնել, վերակազմել անեղծ պատկերը հիմնական. եթէ երբեք հակասութիւններ տեսնուին, հակասութիւններ բնագրական, եւ ո՛չ թէ մեր խելապատակէն ծագում առած, հարկ է փնտռել առարկայական լուծումներ, հիմնուելով միշտ բնագրական տուեալներով վրայ. այլապէս կը մնան ենթակայական. ու ինչպէս ճրի կը ներկայացուին՝ ճրի ալ կը հերքուին։

Այս տեսակէտով շահեկան են բնագրական գոյգ հրատարակութիւնները, զոր մեզի կը ներկայացնեն Արեղեան՝ Հայաս-

տանէն (1941), եւ Հ. Ներսէս Ակինեան՝ արտասահմանէն (1952), վերակազմելու համար Կորիւնեան բնագիրը. անոնք ամենամեծ յարգանքով մօտեցած են այդ ոսկեղէն բնագրին։ Ասոնց վրայ իբր պատմական մանրագնին աշխատութիւն, յիշելու համար դոնէ վերջին քսանամեակի հրատարակութիւնները, ունինք Հր. Ա. ճառեանի «Մեսրոպ Մաշտոց» ուսումնասիրութիւնը, որու մինչեւ ԺԱ. Գլուխը լոյս տեսած է «Էջմիածին» ամսագրերի մէջ, 1954էն առդին։ Ունինք Արեղեանի «Հայոց հին գրականութեան պատմութիւն» (Երեւան, 1942), Մանանդեանի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» (Հատոր Բ, մասն Ա, Երեւան, 1957)։ Վերջերս ստացանք Ս. Տ. Մելիք Բախշեանի «Մեսրոպ Մաշտոց» (Երեւան 1959), Հրայր Մուրադեանի «Դեմքնիկ Դեմիրբեկ» (Երեւան 1961, Մեսրոպի մասին էջ 482էն անդին)։ Ասոնք Հայաստանի, Խորհրդային Հայաստանի հին ու նոր սերունդէն ներկայացուցիչներ, ամէնքն ալ՝ թուարկելու համար միայն աշխարհական գրիչները, համայնավար վարչակարգի տակ՝ կ'ընդունին Մեսրոպ Մաշտոցի թէ՛ կրօնաւորութիւնը, թէ՛ զրոյց գիտելի քրիստոնէական նպատակը, քաղաքական տեսակէտներու կողքին։ Մենք բոլորովին հիասթափ մընացինք կարդալով Նարդուհիի սա տողերը. «Հին մտաւորականները իրենց տուրքը տալու համար Հայաստանի նոր վարչակարգին, գրեցին թէ ժամանակի տընտեսական ու քաղաքական պայմաններն էին առաջ բերել գրի ու գրականութեան անհրաժեշտութիւնը» («Յառաջ», 37րդ տարի, 1961, թիւ 9247, էջ 2)։ Ու կ'աւելցնէ. «Ուրախութիւն է ինձ հաստատել թէ Հայաստանի երիտասարդ մտաւորականները լքած են այժմ այդ երկու հին տեսութիւնները» (կրօնա-քաղաքական նպատակ, քաղաքական նպատակ)։

Յաւով սրտի կրնանք հաստատել թէ հիմնովին սխալ է Պր. Նարդուհիի այդ հաւաստումը։ Հարկ չենք տեսնել էջերով մէջերումներ կատարել. բայց միայն կը

խորհինք որ եթէ Պր. Նարդուհի այս ձեւով քննութեան կ'ենթարկէ Կորիւնի «Վարք Մաշտոցի»ն, վայն է եկեր հայ բանասիրութեան զլխուն։

Պատմական հարցերու մասնագէտ Մանանդեանի հեղինակութիւնը, լեզուական հարցերու մէջ Աճառեանինը, գրական մարդին մէջ Արեղեանինը, շատ աւելի լուրջ ու քննադատի ծանրութեամբ կը ներկայանան, քան Պր. Նարդուհիի - թող ներուի մեզի - համայնագիրական պատգամները, որոնք յաճախ զուրկ կը թուին գիտական հիմքից եւ կը ներկայացուին իբր ժամանցային խորհրդածութիւններ։ (Տէս Յառաջ, 1961, 37րդ տարի, թթ. 9247, 9252, 9258, 9276, 9282, 9283)։

Մեսրոպ Մաշտոց Հայաստանի հարազատ առաքեալն է. այդ պատմական առաքելութիւնը առարկայականօրէն ու լրիւ ուրուագծելու համար՝ երեք տեսակէտ հարկ է աչքի առնել ունենալ միշտ. քաղաքական, կրօնական եւ գրական։ Եւ ահա, պատմաքննական պրպտումներու ընթացքին, մեր զիմաց պիտի կանգնի Մեսրոպ Մաշտոց՝ նախ զինուորականի վրսեմ տարազով, ապա եկեղեցականի խոնարհ պարեգօտով, հուսկ մտաւորականի ոսկի զրիչով, միշտ իբր անխոնջ առաքեալ, ամէնուրեք ներկայացնելով խանդավառ ու գործոն նկարագիր մը, անխոնջ ու աննկուն հայրենասէրի ջերմ ըզգացումներով։

Համաձուլելով Կորիւնի, Փարպեցիի, Խորենացիի տուեալները, ինչ որ սքանչելիօրէն կատարած է Մանանդեան, իսկական բանասէրի ջանքերով, կրնանք գեղեցիկ դրօշը վերակազմել Մեսրոպ Մաշտոցի, եւ նկատել զինք յառաջամարտիկ դրօշակիր մը՝ Հայցելէն Վաղարշապատ, Գողթնի լեռներէն մինչեւ Եդեսիա, Բիւզանդիոնէն մինչեւ Սիւնիք։ Հայրենիք, կրօնք, մշակոյթ, ահա իր եռագոյնին խորհուրդը։

Մեսրոպ Մաշտոց արդարեւ եղաւ առաքեալ Հայաստանի. առաքեալ հայրենիքի,

363-89



քաղաքական տխուր պայմաններում մէջ, նախատեսելով սպառնացող վտանգը՝ երկու կայսրութիւններում միջև կտրաւորւած Հայաստանի. ապագայնայնացում: Ահա առաջին վտանգը: Երկրորդ՝ Մերոպ Մաշտոց իր աչքերով տեսաւ այդ բաժանումը. իր Տարոնաշունչ սիրտը սարսուռաց. Վասակ սպարապետի կամ Մուշեղներու ողին յարութիւն առաւ իր մէջ. ու նուիրուեցաւ զինուորական կեանքի: Ծագումով հաւանաբար աղնուական, մտաւ արքունիք: Քաղաքական հարցերը հրահրեցին իր սիրտը. եղաւ արքունի դիւանապետ, առեւտրային: Իր պաշտօնին բերումով, անշուշտ, քաղաքական ու պետական վարչաձեւի ամենազաւոր ծաղկերուն տեղեակ դարձաւ շուտով, գրաւելով համակրանք ու վստահութիւն: Ու սկսաւ խորհիլ ելքի ճամբան: Նկարագրով վերջին ծայր դործօն, Հայաստանի փրկութեան լաստափայտը կ'որոնէր, քաղաքական այդ հեղեղին մէջ: Հայաստանի թագը խախտու էր. Տիրոն կը սպառնար: Բիւզանդիոն իր երախին մէջ կ'առնէր օրըստօրէ արեւմտեան Հայաստանը: Հարկ էր այդ երկուքը ձուլելու հնարք մը գտնել:

Մերոպ Մաշտոց անած էր հելլէն մշակոյթով, ըստ Կորինի: Դերենիկ Դեմիտրիան իր «Մերոպ Մաշտոց» անաւորտ վէպին սկզբնաւորութեան՝ Բիւզանդիոնէն կը բերէ երկրասարդ Մերոպի: Թէեւ ոչ անհաւանական, սակայն միշտ Կորինի հետեւելով՝ արքունիքին մէջ է որ Մերոպ, իր դիւանապետի պաշտօնի շրջանին, նուիրուեցաւ բոլորովին մտաւորական կեանքի, իր խորախորհուրդը ընթերցումներով: Փարպեցիի եւ Խորենացիի պատմածներէն կը հետեւցնէ Աւստան, որ Մերոպ ասորերէն ու պարսկերէն ալ գիտէր, հաւանաբար նաեւ քիչ մը վրացերէն: Ահա, ուրեմն, մտաւորական Մերոպը, ծանօթ՝ յոյն պարսիկ եւ ասորի գրականութեանց, դարգացած անոնց դասականներով, ընտելացած հեթանոս ու քրիստոնէայ հեղինակներու: Բայց այդ բոլորը Մերոպ Մաշտոցի համար օ-

տար էին. կը մորմոքէր իր սիրտը տեսնելով իր շուրջ միայն օտար լեզու, օտար հեղինակներ, օտար մագաղաթներ: Հայը չունէր սեփական գիր. Հայաստան գուրկ էր ինքնատիպ գրականութենէ: Ահա երկրորդ վտանգը ապագայնայնացումի: Խանգաւառուած իր ընթերցումներէն՝ կը թողու արքունիքը, կը հագուէր ճշմարտի պարեղօտը եւ կ'անցնէր Գողթնի լեռները. իր ետեւէն Մանանդեան, Աւստան, Մելիք Բախչեան եւս Գողթն կը վազէր, մեր օրերուն, դանելու համար Մերոպի ճշմարտը: Իսկ արտասահմանի մէջ Պր. Նարեկունի կը ծիծաղի անոնց վրայ. կը ծիծաղի անշուշտ նաեւ պատմութեան վերայ, վերջին ծիծաղը թողնու պատմագէտին:

Զինուորական մը ինչպէս կ'ըլլայ ճշմարտ, կը խորհրդածէ Պր. Նարեկունի: Մոռցած է որ Գրիգոր Լուսաւորիչ ալ արքունիքէն կու գար, Մեծն Ներսէս ալ զինուորական էր: Իսկ նոր ժամանակներէն քանի մը օրինակներ թուելու համար, իսկոյն հարցնենք որ զինուորական մը չէ՞ր Իգնատիոս Լոյոլան, որ հիմնադիր եղաւ կրօնական հսկայ Միսիսիոնական մը. զինուորականներ չէին այն յանդուգն սաւառնորդները, որոնք վերջին պատերազմի հիւլէական ռմբակոծութիւններէն հիսթափ՝ մտան Ամերիկայի տրապեան ճշմարտները: Բայց հարկ չկայ երկարելու Նարեկան այս ծիծաղելի առարկութեան մասին:

Հարց տանք սակայն թէ ինչո՞ւ կրօնաւոր եղաւ Մերոպ: Պր. Վ. Մ. Քիւրքեան, դարձեալ «Յառաջ» օրաթերթի էջերուն վրայ կը ժպտի գրել. «Մերոպ հոգեւորական էր դառնար ճշմարտի մը հայեցողական խորհուրդներով պարապելու, աղօթքով, ծովապահութեամբ եւ այլ կրօնական առաքինութիւններով միայն զոհանալու համար» (անդ, թիւ 9247): Այսպէս պատճառարանող մը, ներուրի մեղի ցաւով սրտի յայտարարել՝ թէ ամենեւին չէ ճանչցած քրիստոնէութեան նկարագրը, գործօն հանգամանքը նաեւ ճշմարտական կեանքին: Այսպէս խոր-

հոգները կարծէք ճշմարտութիւնը եւ կրօնաւորական կեանքը կը շփոթին պարապրօթութեան հետ. մինչ փորձով իսկ կը տեսնենք որ այդ անապատի ճշմարտներն են որ յեղափոխական շարժում կը ստեղծեն հոգիներում մէջ, աշխարհի մէջ: Խաչակրութեան անխոնջ քարոզիչը ճշմարտութիւնը չէ՞ր:

Չենք կարծեր թէ Մերոպ կրօնաւորութեան դիմած ըլլայ, յուսահատելով քաղաքական կեանքէն ու հայ աշխարհի քաղաքական վերականգնումէն: Մերոպ այդ տկարութիւնը չէր կրնար ունենալ: Իր ճշմարտութիւնը պատրաստութիւն մըն էր նուիրուելու քարոզչական կեանքի. ըմբռնեց՝ թէ քրիստոնէութիւնը ամբողջութեամբ է որ հայ աշխարհը կրնար փրկուիլ: Ճշմարտին մէջ միտուեցաւ նաեւ Մերոպի հայրենասիրութիւնը եւ դարձաւ իսկական առաքինութիւն, իսկական ազդասիրութիւն, բառին հարազատ եւ ամբողջական իմաստով. հողալ ո՛չ միայն հայրենիքի քաղաքական ապահովութիւնը, այլ նաեւ անոր կրօնքը, կրօնական վերելքը, ծաղկումը: Առանց կրօնքի, արդարեւ, ազդասիրութիւնը կրնայ դառնալ յաճախ ազդամոլութիւն, անհատական փառասիրութեան ու տիրապետումի զգացումներով խառնուած: Այս ուղղութեամբ է որ դարերու ընթացքին ալ պիտի ելլէն հայրենասէր եկեղեցականներ, Ղեւոնդ Երեցեյն մինչեւ Ալիշան, որոնք հայրենիքը նկատեցին միշտ իր ամբողջութեան մէջ, իր պետականութեամբ եւ իր կրօնքով, ինչպէս հողի ու մարմին՝ մարդու մէջ:

Ու Մերոպ իջաւ ճշմարտէն, աշակերտներու հետ, սկսելու համար իր քարոզչական կեանքը: Ահա զինուորականը. գործօն, շարժում, կազմակերպող: Ընդհան է որ Մերոպի նկարագրը Ս. Անտոն ճշմարտի նման էր: Մերոպի նկարագրը մենք կը գտնենք, դարերուն հետ վեր ելլելով, Միթիթարի մէջ. ան ալ, թէեւ ոչ զինուորական, սակայն նման ձեւով ժիր, անխոնջ, աննկուն, անվատ, զբոսաւորութիւններու դիմաց չի դիտեր կա-

սիլ, կը խորհի միշտ ելքի ճամբան, ժայռերն իսկ կը խորտակէ, մինչեւ հասնի փրկութեան նաւահանգիստը, եւ իր հետ շատեր ալ հասցնէ:

Մերոպ Մաշտոցի քարոզչութիւնը կը սկսի Գողթն գաւառէն. ճշմարտեան պրտուրն է այդ քարոզչութիւնը. եւ անոր ըստինքնի պտուղը պիտի ըլլայ դրոց դիւտը: Ծաւալել, սփռել, ծանօթացնել այն գանձը՝ զոր ինք Մերոպ գտած է. հայ աշխարհի փրկութիւնը՝ իսկական քրիստոնէութեամբ: Բայց ահա առաջին դժուարութիւնները: Մերոպ իսկոյն չունէր կ'առնէ Վաղարշապատի Հայրապետանոցը, ելք մը խորհելու: Կորինի պատմութեամբէն կը հետեւի՝ որ, միաժամանակ, Մերոպ Գողթնի մէջ, Հայրապետն ու արքան Վաղարշապատի մէջ կը խորհին նոր ելքի մը մասին. խորհուրդ հայ գրեթէ:

Քրիստոնէութեան լոյսը թէեւ առաքելական շրջանէն ծագած էր Հայաստանի մէջ, բայց պաշտօնապէս Լուսաւորիչ-Տրդատով սկսաւ: Սակայն մինչեւ Մերոպ Մաշտոցի օրերը արմատացած ու տարածուած չէր լիով. հեթանոսական միացորդներ կային, հեթանոսական մշտնութիւն կար, նոյնիսկ նախարարական տուններու մէջ: Եւ ասիկա պարսկասէր քաղաքականութեան առատ կեր կըրնար ըլլալ: Ազդային նկարագրով, հայրենասէր զգացումներով, Արտաշէսի ու Արշակի փառքերը երգող սերունդ մը երբ քրիստոնէայ դառնար, դժուար է թէ խանգաւառուէր յոյն կամ ասորի ծէսով եւ արարողութիւններով. քրիստոնէութիւնը ապագայնայնացման դուռ պիտի նրկատուէր ազգասէր սերունդին կողմէ: Ահա հուսկ երրորդ վտանգը: Ահա թէ ինչո՞ւ Մերոպ եւ Սահակ կը խորհին գրեթէ ստեղծել, որպէսզի հայ ժողովուրդին ձեռքը հայրենի տան Աստուածաշունչը:

Պր. Նարեկունի հոս եւս կ'ուզէ նոր մեկնութիւն մը տալ, յոյն եւ ասորի քրիստոնէութեանց դէմ հանելով ազգային քրիստոնէութեան զաւաթարը, իրր դիւտ Մերոպի, եւ ատով ստեղծելու ազգային

ինքնազուլիս քրիստոնէութիւն մը: Այս մեկնութիւնը կարօտ է ապացոյցի, դրամական հիմերու, որոնք առ այժմ գոյութիւն չունին՝ պատմական տուեալներու համաձայն:

Ս. Մեսրոպ չէր կրնար խորհիլ քրիստոնէութիւնը ազգայնացնելու մասին. կրնար խորհիլ ազգը քրիստոնէացնելու մասին, առանց կորսնցնելու ազգային նրկարագիրը. այսինքն՝ քրիստոնէութեան զգացումը աւելի ընտանեցնելու, աւելի խորացնելու՝ պարսկներէն անջատումը աւելի զգալի դարձնելու համար. միաժամանակ այդ զգացման յայտնուելու կերպերուն ընծայելով հայ դրոշմ ու նկարագիրը: Հետեւաբար յոյն եւ ասորի ծէսերու շարքին՝ ստեղծելով հայկական ծէս, արարողութիւն: Ահա հայրենասէր առաքեալին գիւտին մեծութիւնը:

Միւս կողմէ Պր. Նարեկունի տեղեակ է անշուշտ թէ քրիստոնէութիւնը իբր կրօնք՝ չի կրնար ազգայնանալ. երբ ազգայնանայ՝ կը կորսնցնէ իր քրիստոնէական նկարագրէն կարեւոր տարր մը, ընդհանրականութիւնը: Կը կարծենք թէ Մեսրոպ Մաշտոց շատ աւելի լաւ կ'ըմբռնէր քրիստոնէութեան հարազատ նկարագիրը՝ քան մենք, քան ինքնին Պր. Նարեկունին: Եւ այդ ըմբռնեց ճիշտ Գողթնի քարանձաւներուն մէջ:

Անդին, ծանօթ է ամէնուս՝ որ ասորի եւ յոյն քրիստոնէութիւնները միայն հերձուածող տարրերով լեցուած չէին, ինչպէս կարծէք Նարեկունի կ'ուզէ ներկայացնել, որոնց իբր թէ ազգային ընդգիծագիր անկախ քրիստոնէութիւն մը ուղէ ստեղծել Մեսրոպ: Ասորի եւ յոյն քրիստոնէութեանց մէջ՝ զանգուածային էր ուղղափառ մասը, Ոսկերեանէն Եփրեմ, որոնք քիչ յետոյ «հայաբարբառ, հայերէնախօս» պիտի յայտնուէին, Կորիւնի իսկ խօսքերով: Եթէ ասորի եւ յոյն քրիստոնէութեանց ընդգիծագիր հայ անկախ ու ազգային քրիստոնէութիւն մը կ'ուզէր ստեղծել Մաշտոց, այն ատեն՝ ինչո՞ւ հայ աշխարհը լեցուցին յոյն եւ ասորի քրիստոնէութեան գլուխ գործողներու անթիւ

Թարգմանութիւններով. ինչո՞ւ որդեգրեցին Նիկիոյ եւ Եփեսոսի ժողովներուն կանոնները, ինչո՞ւ Բիւզանդիոն խուժեցին՝ զարգանալու. ինչո՞ւ ասորի ու յոյն ծէսը Թարգմանեցին, անոնց տարազներն իսկ առին: Եւ յոյներն իսկ մեծարեցին Մեսրոպ Մաշտոցը եկեղեցական պատուանունով, ցոյց տալով մեզի՝ թէ չկար ընդգիծագիր քրիստոնէութիւն:

* * *

Գրոց գիւտով կը սկսի «Գիրք Եւրոպայի Մեծաց»...: Գտնուած է փրկութեան լատափայտը, յաւերժութեան բանալին, երկու հօր կայսրութիւններու դիմաց կառուցանելի հսկայ պատուարը. հայ գրերը...: Հայոց պատմութիւնը յարուստ պիտի առնէ իր դարաւոր գերեզմանէն. անկախութեան ոգին պիտի զօրանայ. հայը պիտի չօտարանայ: Քրիստոնէութիւնը հայկական տարազով պիտի ներկայանայ. հայ շինականն ու ազատորեարը հայերէն պիտի խնկերգեն, հայերէն պիտի երկրպագեն. Գողթան երգերու առընթերձ՝ հայ շարականներ պիտի լեցնեն հայ տաճարները:

Ու կը կատարուի տօն ցնծութեան ամբողջ հայրենիքին մէջ:

Մեծ է գաղափարը՝ ինչքան Մասիսը: Բայց տակաւին ի՞նչքան ճիշդ ու աշխատանք: Մեսրոպ Մաշտոց ճիշտ պահանջուած մարդն է. գիշերը ցերեկ կը դարձնէ, ոչ միայն աղօթքով, ինչ որ չ'ուզէր ընդունիլ Նարեկունի, այլ նաեւ աշխատանքով: Կը փորձէ Դանիէլեան գրերը. անյաջող ելքէն չի լքանիր. կ'իջնէ Ամիգ, Եղեսիա, աշակերտներով: Նախատես ապագային եւ յաջողութեան ինքնավստահ, աշակերտները ուսման կը դնէ, մաս մը յունական, մաս մը ասորական մշակոյթի ճամբով զարգանալու. ինք մինակ կը պայքարի, կը մաքառի. երկո՞ւնք տարօրինակ...: Հերակլէսի պիտի ուզէի ես նմանցնել մեր Մեսրոպը՝ իր տիտանային ճիգերուն մէջ: Եւ ահա կը ծնի հուսկ «նորոգ եւ սքանչելի, սուրբ աջովն իւրով՝ նշանագիրս հայերէն լեզուին»: Կորիւնի

այս բացատրութիւնը շատ նշանակալից կը թուի մեզի. աստուածային բացառիկ օժանդակութեան եւ հրաշապատում դըրուած մը չէ՝ գրերու գիւտը, ըստ Կորիւնի, այլ արգիւնք «բազում աշխատութեանց... վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գրտանելոյ»:

Մաշտոց իսկոյն գործի կ'անցնի. Թարգմանութիւն. դարձ ի Հայաստան. հոն ալ զարոցներու կազմակերպութիւն. դարձեալ ի Գողթն, Սիւնիք, արեւմտեան Հայաստան, մինչեւ Բիւզանդիոն, յունական բաժնին մէջ եւս զարոցներ կազմակերպելու նպատակով:

Հոս է որ Նարեկունի վեր կը հանէ իրաւացի կերպով Մեսրոպի դիւանագիտութիւնը. սիրաշահիլ կայսրն ալ՝ նախանձով պարսկական բաժնի, ուր գիւտը կատարուած էր եւ հրաման կար հայերէն սորվելու. որպէսզի Հայաստան չըլլայ թէ յարէր Պարսկաստանի: Սակայն չենք սիրել Նարեկունի բերած նմանութիւնը Տրդատի քաղաքականութեան հետ, որու մասին խօսիլը դուրս է մեր նպատակէն: Կրնանք, հուսկ, աւելցնել՝ որ անիմաստ չէր Մեսրոպի դիւանագիտական մէկ ուրիշ շարժումն ալ. պարսկական բաժնին մէջ, ասորական ազդեցութեան չըջանակի մէջ հայ գիր ստեղծել, օգտուելով Պարսից թոյլտուութենէն, սակայն միւս կողմէ ալ յարեւելի կարգը, նաեւ շատ մը դրամներ յոյնէն փոխ առնելով: Ահա թէ ինչքան հնարք կրնար խորհիլ հայրենասէր միտք մը, կրօնքի անխառն զգացումներով տողորուած:

* * *

Կորիւն շատ զեղեցիկ կերպով համադրած է Մեսրոպի բովանդակ առաքելութիւնը. «վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ»:

Մեսրոպ Հայաստանի իսկական առաքեալն է, որ իր կեանքը համակ զոհած է

իր պաշտելի հայրենիքին համար. հայրենիքի անկախութեան համար, հայրենիքի կրօնքին համար, հայրենիքի գրականութեան համար: Մեսրոպ Մաշտոց, իբր զինուորական ու քաղաքական մարդ, իբր հաւատաւոր եկեղեցական, եւ իբր բանիւրուն մտաւորական, լիով գիտակցութիւնն ունէր հայրենիքի երեք կարօտութիւններուն, զոր ներկայացուցինք վերեւ. եւ կը հաւատար որ հայ տառերով միայն պիտի փրկուէր հայութիւնը մշտնջենապէս: Եւ ինչ որ չկրցաւ քաղաքական ասպարէզին մէջ կատարել, կրօնքի ճամբով լիովին ի գլուխ հանեց: Ահա հոս է կրօնքին, քրիստոնէական կրօնքին զօրեղ հարստութիւնը, ստեղծագործ գործութիւնը, հնարագիւտ բեղնաւորութիւնը:

Այս տեսակէտով մենք կը հեռանանք Հայաստանեան կարգ մը պատմագէտներու կարծիքէն ալ, որոնք կը համարին թէ որքան որ Մեսրոպ Մաշտոց իր գիւտին ձեռնարկեց կրօնական քարոզչական նըպատակներով, ինչպէս տեղի ունեցած է գոթերու կամ սլաւներու մօտ, այնուհանդերձ այդ գիւտն ունեցած է մաքուր քաղաքական մեծ նշանակութիւն՝ ինչպէս կ'ըսէ Մանանդեան՝ որովհետեւ սեփական հայ գրի ու գրականութեան ստեղծումը մտցուց հայութիւնը մեծ մշակոյթ ունեցող հին ժողովուրդներու շարքին, և արթնցնելով անոր ազգային ինքնազգիտակցութիւնը՝ արգելք եղաւ հայ ժողովուրդի ասպագայնացման (անդ, էջ 246): Կը կարծենք թէ մշակութային ու քաղաքական այն արդիւնքները որոնք առաջ եկան գրերու գիւտէն, ո՛չ թէ պարզ արդիւնքներ են, այլ իսկական նպատակ՝ կրօնական վերածաղկումէն անրաժան՝ Մեսրոպ Մաշտոցի կողմէ լիովին նախատեսուած:

Ահա՛, ուրեմն, թէ ո՛ւր է Մեսրոպ Մաշտոցի իսկական մեծութիւնը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ